

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2002 թվականի հունիսի 12-ին

ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 13. Սեյսմիկ պաշտպանության ոլորտում ~~Հայաստանի Հանրապետության պետական կառավարման հանրապետական գործադիր-պետական կառավարման համակարգի~~ մարմինների իրավասությունները

1. ~~Հայաստանի Հանրապետության հանրապետական գործադիր-պետական կառավարման համակարգի~~ մարմիններն իրականացնում են սեյսմիկանվտանգության ապահովման վերաբերյալ սույն օրենքով, ինչպես նաև այլ օրենքներով ~~և իրավական ակտերով~~ սահմանված լիազորություններ:

Հոդված 14. Սեյսմիկ պաշտպանության ոլորտում պետական կառավարման տարածքային մարմինների իրավասությունները

1. Պետական կառավարման տարածքային մարմինները՝

1) կազմակերպում են մարզի բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում.

2) իրականացնում են Հայաստանի Հանրապետության տարածքում երկրաշարժի առաջացման մասին բնակչության ազդարարումը.

3) կազմակերպում են սեյսմիկ պաշտպանության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստումը և բնակչության ուսուցումը.

4) մշակում են ուժեղ երկրաշարժի կամ դրա սպառնալիքի դեպքում արագ արձագանքման և առաջնահերթ գործողությունների օրացուցային պլաններ, անցկացնում են դրանցով նախատեսվող ուսումնավարժանքներ.

5) կազմակերպում են մարզի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման բնագավառում ծրագրերի մշակումն ու համակարգում այդ ծրագրերում նախատեսված աշխատանքները.

6) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում և Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերում ներառում են լիազոր մարմնի կողմից հաստատված սեյսմիկ շրջանացման և սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզներ:

Հաստատված սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզները ներառվում են մարզային, համայնքային զարգացման ծրագրերում և, առկայության դեպքում, տարածքային մակարդակի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի ելակետային նյութերի փաթեթում.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության մարզերի և բնակավայրերի զարգացման ծրագրերում ներառում են սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ.

8) մշակում են սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկխոցելիության նվազեցման միջնաժամկետ ծրագրեր.

9) մասնակցում են պետական ծրագրերով նախատեսված՝ սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացմանը.

10) տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական կազմակերպություններին ու բնակչությանը օրենքով սահմանված կարգով կարող են ներգրավել սեյսմիկ ռիսկի նվազեցման աշխատանքներում.

11) իրականացնում են սեյսմիկ անվտանգության ապահովման վերաբերյալ ~~Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ օրենքով~~ սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 15. Սեյսմիկ պաշտպանության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները

1. Սեյսմիկ պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը սահմանվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով և այլ օրենքներով:

2. Սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ տեղական ինքնակառավարման մարմինները՝

1) կազմակերպում են համայնքի տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման բնագավառում տարվող աշխատանքները.

2) ապահովում են համայնքի տարածքում ուժեղ երկրաշարժերին բնակչությանը նախապատրաստելու աշխատանքները.

3) աջակցում են համայնքի տարածքում սեյսմիկ պաշտպանության բնագավառում պետական ծրագրերի կատարմանը.

4) մասնակցում են ուժեղ երկրաշարժի վտանգի մասին բնակչության ազդարարման գործընթացին.

5) սեյսմիկ աղետի դեպքում կազմակերպում են դրա հետևանքների վերացման աշխատանքները հասարակական կազմակերպությունների և բնակչության ներգրավմամբ.

6) իրականացնում են ~~Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ օրենքով~~ սահմանված այլ լիազորություններ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են որպես պետության կողմից պատվիրակված լիազորություն:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: